ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության և Չորային գոտիներում գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնի (ICARDA) միջև գյուղատնտեսական գիտությունների ոլորտում համագործակցության մասին

Չորային գոտիներում գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնը (այսուհետ՝ ICARDA) և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, /այսուհետ՝ Գյուղատնտեսության նախարարություն/, այսուհետ՝ Կողմեր,

առաջնորդվելով գյուղատնտեսական գիտությունների ոլորտում փոխադարձ համագործակցության զարգացման անհրաժեշտությամբ,

համոզված լինելով, որ գյուղատնտեսական գիտությունների ոլորտում համագործակցությունը կնպաստի գյուղատնտեսության առաջընթացին, հողերի բերրիությանը և մշակաբույսերի ու կենդանիների արդյունավետության բարձրացմանը,

Հայաստանում գյուղատնտեսության արդյունավետության բարձրացման, բույսերի և կենդանիների գենետիկական ռեսուրսների պահպանության և շրջակա միջավայրի պաշտպանության, գյուղատնտեսական գիտության ոլորտում արտասահմանյան ներդրումների ներգրավման, միջազգային ժամանակակից միջոցների օգտագործման, գիտական կադրերի պատրաստման ուղղություններով ICARDA-ի և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության համագործակցությունը կազմակերպելու նպատակով,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Արդյունավետ համագործակցություն հաստատելու նպատակով Կողմերը կիրագործեն՝

ա) գիտնականների, մասնագետների և առաջավոր տեխնոլոգիաների փոխանակում,

բ) Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության և Կենսաբանական բազմազանության մասին միջազգային կոնվենցիայի համապատասխան սերմերի և սելեկցիոն նյութերի փոխանակում,

գ) գիտական գրականության, տեղեկատվության և մեթոդաբանության փոխանակում,

դ) համատեղ գիտահետազոտական ծրագրերի ապահովման նպատակով սարքավորումների ներկրում և արտահանում:

Հոդված 2

Կողմերի միջև հատուկ պայմանավորվածությունների համաձայն՝ կադրային և բյուջետային հնարավորությունների սահմաններում ICARDA-ն կտրամադրի՝

ա) ICARDA-ի հաստիքային և միջազգային այլ գիտահետազոտական կենտրոնների աշխատողների խորհրդատվություն Հայաստանի ազգային գիտական հետազոտությունների մակարդակը բարձրացնելու և օգնություն ցուցաբերելու համար,

բ) արտասահմանյան գիտնականների երկարաժամկետ գործուղումներ Հայաստան, եթե դա անհրաժեշտ և իրագործելի է համատեղ ծրագրերի համար,

գ) գիտնականների կարճաժամկետ այցելություններ,

դ) ֆինանսական աջակցություն՝ Հայաստանի տարբեր ազգային հաստատությունների գիտնականների ուսուցման, ինչպես նաև համաժողովներին, սեմինարներին և գիտաժողովներին նրանց մասնակցության համար,

ե) անհրաժեշտ քանակի սերմանյութ՝ փորձեր, լայնածավալ արտադրական փորձարկումներ և ցուցադրումներ կազմակերպելու համար,

զ) գիտահետազոտական գրականություն և հրապարակումներ:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը կադրային և բյուջետային հնարավորությունների սահմաններում կտրամադրի՝

ա) հետազոտական գործունեության նպատակով փոխադարձ համաձայնությամբ իրականացվող ծրագրերի կատարման համար անհրաժեշտ հարմարություններ և հողեր,

բ) գիտական և անհրաժեշտ տեխնիկական աշխատակազմ՝ փոխադարձ համաձայնությամբ իրագործվող ծրագրերի համար,

գ) ICARDA ծրագրերի իրագործման հետ կապված անձնակազմի, վերապատրաստվողների և սովորողների մուտքը Հայաստան ապահովող ընթացակարգեր և հարմարություններ,

դ) միջազգային կանոնակարգերի և Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ՝ ICARDA-ի հետ համատեղ ծրագրերի իրագործման նպատակով Հայաստանի Հանրապետություն սաղմնային պլազմայի անսահմանափակ ներկրման և արտահանման թույլտվություն:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ապահովում է նյութերի արագ և անհապաղ ստուգումը:

Հոդված 4

Երկու Կողմերը կարող են զարգացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հետազոտությունների ոլորտում համատեղ ծրագրերին հնարավոր դոնորների աջակցությունը:

Հոդված 5

Կողմերը համաձայնում են, որ՝

ա) համատեղ ջանքերով ստեղծված օգտակար արդյունքները, ինչպիսիք են բարելավված սելեկցիոն նյութը, տեխնիկական մշակումները և մեթոդները, Կողմերը իրավասու են օգտագործել հավասարապես,

բ) հասարակական հետաքրքրության ներկայացնող հետազոտական արդյունքները տպագրվում են համատեղ համաձայնությամբ:

Հոդված 6

Սույն Համաձայնագրում Երկու Կողմերի համաձայնությամբ, կարող են փոփոխություններ և լրացումներ կատարվել: Փոփոխությունները ձևակերպվում են առանձին արձանագրություններով, հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված կարգով:

Հոդված 7

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի այն օրվանից, երբ հայկական Կողմը կծանուցի ICARDA-ին դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի նույն ժամկետով, եթե Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից 6 ամիս առաջ Կողմերից որևէ մեկը գրավոր չծանուցի մյուս Կողմին դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Հալեպ քաղաքում 1999 թվականի սեպտեմբերի 16-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի ապրիլի 10-ից: